ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԶ-ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ

ԺԶ եւ ԺԷ դարերը թուրք-պարսկական պատերազմների եւ նրանցով պայմանավորված ընդհանուր անիշխանության պատճառով հայ ժողովրդի համար ամենադաժան ու սարսափներով լի շրջաններից են՝ ճակատագրական դարձած իրենց բոլոր հետեւանքներով: Հայաստանը, զրկված քաղաքական իշխանությունից, թատերաբեմ էր պատերազմների եւ կռվախնձոր գերիշխանության ձգտող մահմեդական պետությունների միջեւ՝ ենթարկվելով ավերների ու կողոպուտի, բնակչության ոչնչացման եւ գերեվարման:

Աշխարհիկ իշխանությունից զուրկ երկրում գրեթե մարել էր քաղաքական կյանքը: Անմխիթար կացության մեջ էր նաեւ նրան փոխարինելու եկած հոգեւոր իշխանությունը իր դժվարին առաքելությամբ. պահպանել ազգային ինքնագիտակցությունը եւ այն սնուցող հավատքը, շարունակել կրթել ժողովրդին ու վառ պահել գիտության ջահը:

Ամայի ու խառնակ ժամանակաշրջանն իր վարակիչ ազդեցությունն էր թողել հոգեւոր-մշակութային կյանքի վրա, որի նմանը երբեւէ չէր վիճակվել հայ ժողովրդին. «Դառնանք յարեւելս, ի մայրն արեւելեաց աշխարհաց, ի բուն մեր հայրենիս՝ ի Հայաստան... Ինչ խորութիւն խաւարի եւ լռութեան, - ցավով գրում է Ղեւոնդ Ալիշանը, - ինչպէս անուշան այն ընդարձակ եւ բազմաբնակ աշխարհին, որ ի սկզբանէ բոլոր երկրիս վրայ առաջին նշանն էր... Թէրեւս հայութեան հիգագոյն դարն է ԺԵ-ԺԶ դարուց միջոցն. ոչ եկեղեցական յիշատակելի դէպք մը. ոչ ազգային քաղաքական երեւոյթ մը... ոչ քաղաքական երեւոյթ մը. եւ ոչ այլ նշոյլք բանասիրութեան կամ գրականութեան, որ թերեւս քան զայլ նշանս՝ երկարատեւ եւ յայտնագոյն ցոյց է կենդանութեան մեր ազգին: Այո, մատենագրութեան մասամբ այլ, ...մեր աղքատագոյն ժամանակն է այս, ...ո՛չ հայերէն գրական լեզուի յստակութիւն, եւ ո՛չ անոր մշակութիւն գրելով ու կարդալով, որոց դիւրութան հնարքներն այլ նուազեր էին յեր աւերմանց եւ աւարմանց վերյիշեալ բռնաւորաց»[1]: Այսպես տխուր է հայ իրականությունն ու հոգեւոր-մշակութային կյանքը ԺԵ դարից սկսյալ մինչեւ ԺԷ դարասկիզբ, Մանուկ Աբեղյանի բնութագրմամբ՝ «Անկումը սոսկալի էր. մեր հին քաղաքակրթությունը գրեթե ամբողջապես ոչնչացել էր այդ ժամանակ»[2]:

Այլեւս չկան գրական կոթողներ հեղինակողներ, եւ հայ մտավոր կյանքը շարունակվում է մի քանի հեղինակների ու ժամանակագիրների եւ բազում հիշատակագիրների մանր ստեղծագործություններում, որոնցում հանդիպում ենք միեւնույն պատկերին. բոլոր

1 **Ղ. Ալիշան**, Յուշիկք հայրենեաց հայոց, հ Ա., Վենետիկ, 1869, էջ 522-523:
2 **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 545:

հեղինակները բողոքում են տիրող անօրինությունից, անգրագիտությունից եւ խափանված եկեղեցական կարգերից ու բարքերից: 1604 թ. գրված մի ձեռագրում հիշատակարանագիրն արդարացիորեն բողոքում է. «... աւր ըստ աւրէ առօելումք ի մեղս եւ արհամարհեմք եւ անարգեմք զամենայն խրատ եւ զբանս սբ. գրոց, որ է ի շահ եւ յաւգուտ հոգւոց մերոց»[3]: Պատմաբան Լեոն ժամանակաշրջանի մասին խոսելիս միանգամայն դիպուկ նկատում է. «Գուցե այնքան առատությամբ թափվող դժբախտություններից ոչ մեկն այնքան ահռելի չէր, որքան այն, որ 1200 տարի գիր եւ դպրություն պահպանած մի ժողովուրդ դարձել էր անգրագետ»[4]:

Անժխտելի է, որ հայ գրերի ստեղծումից հետո կրթության ու դաստիարակության գործը իր ձեռքն էր վերցրել Հայ Եկեղեցին՝ այն իրականացնելով վանքերին ենթակա կամ այնտեղ գործող դպրոցներում, որոնցից մի քանիսը կոչվել են նաեւ համալսարան: Մի իրողություն, սակայն, համընդհանուր բնույթ էր կրում հոգեւոր կրթարաններում. այնտեղ հիմնականում պատրաստվում էին եկեղեցականներ կամ ուսումը կատարելագործում էին արդեն որեւէ դպրոց ավարտած վարդապետներ: Սրանք ավարտելով կոչվում էին հոգեւոր ծառայության, եւ իրենց եկեղեցական գործունեությանը զուգահեռ զբաղվում ժողովրդի կրթությամբ, հիմնականում՝ գրաճանաչ դարձնելով:

Կրթական այս առաքելությունը եկեղեցին կատարում էր նաեւ հայկական թագավորությունների գոյության ժամանակ: Միայն պատմական դեպքերի բերումով է երբեմն նա դժվարացել այն լիիրավ իրականացնելու, որը, սակայն, թելադրված էր երկրում տիրող անկայուն քաղաքական կացությամբ, իսկ առանձին դեպքերում՝ եկեղեցու առաջնորդների՝ իրենց բարձրությանը ոչ հարիր պահվածքով:

Այս երկու հանգամանքները, որ հաճախ առանձին-առանձին պատճառ են դարձել հոգեւոր-մշակութային կյանքի մասնակի վատթարացման եւ անկման, ԺԵ դարից սկսյալ «համատեղվում» են, եւ սկսվում է մեր պատմության ամենամռայլ ու տխուր էջերից մեկը: Հայաստանը մեզ է ներկայանում որպես համատարած ավերի ու անկարգության մի երկիր, որտեղ արհամարհված են թե՛ սրբությունները, թե՛ գիտությունը եւ թե՛ մարդկային հարաբերությունները: Այս անգամ հայ հոգեւոր-մշակութային կյանքն անկումային վիճակում էր հայտնվել ոչ միայն քաղաքական անբարենպաստ կացության պատճառով, ինչպես գրում է Կարապետ եպիսկոպոս Ամատունին. «Եկեղեցական անբնականոն վիճակ մը, որուն սակայն հասած էր Աթոռը՝ նշաւակ քաղաքական բռնապետութեան»[5], այլեւ ժամանակի մի քանի հոգեւոր առաջնորդների անփութության հետեւանքով:

Հայրապետական աթոռը դժվարին օրեր ապրում էր դեռեւս Կիլիկիայում: Թագավորական եւ իշխանական տների ձեռքում խաղալիք դարձած, զրկվելով նրանց հենարանից եւ ընկնելով օտար լծի տակ՝ այն ավելի վատթար դրության մեջ է հայտնվում: Նախորդին թունավորելով կամ կաշառքի ուժով հեռացնելով գահ են բարձրանում կաթողիկոսներ, ովքեր նսեմացնում էին «համահայկական միակ հիմնարկություն դարձած կաթողիկոսական աթոռի վարկն ու հեղինակությունը»[6]:

---

3 «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ(1601-1620թթ.)», կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հ. Ա, Երեւան, 1974, էջ 140:

4 **Լեո**, Երկերի ժողովածու, հ. Գ, Երեւան, 1969, էջ 273:

5 **Կարապետ եպս. Ամատունի**, Մովսէս Գ Տաթեւացի Կաթողիկոս Էջմիածնի, Վենետիկ, 1992, էջ 11:

6 **Լեւոն Խաչիկյան**, Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, Երեւան 1999, էջ XXII:

Ժամանակի ոգու մասին են ԺԷ դարի պատմագիր Գրիգոր Դարանաղցու դառն խոսքերը. «Եւ վանորէից աբեղայքն, որ ամէնքն առ հասարակ սուտ եպիսկոպոսք էին եղեալ, վասն միմեանց նախանձու... թողեալ էին զլուսազարդ վանորայսն, սփռեալ էին ի գեղորայսն...»[7]: Պատկերն ամբողջացնելու է գալիս Առաքել Դավրիժեցին. «Վասն զի ամենայն վանօրայք ազգիս հայոց՝ իւրաքանչիւր սեւագլուխ ունէր իւր զինչս առանձին: ...Եւ զնուիրեալ տեղիսն Աստուծոյ, որք բնակարան են նշխարաց սրբոց եւ սքանչելագործ, եւ շնորհակիր նշանաց Աստուծոյ, լցեալ էին զայնոսիկ... իւրեանց ազգայնօք»[8]:

Հոգեւորականների անհոգության, աղքատության եւ այլ աշխատանքով զբաղվելու հանգամանքն իր յուրօրինակությամբ եւ աչքի զարնող ցայտունությամբ նույնիսկ գրավել է օտարների ուշադրությունը. «...նրանք բոլորն էլ աղքատ են ու վատ հագնված..., - գյուղական քահանաների մասին գրում է ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը, - կարիքը նրանց մշտապես ստիպում է հոգալ գոյության միջոցների մասին»[9]:

Դարավոր մի եկեղեցու, կրոնական կազմակերպված մի համակարգի այսպիսի դրության մեջ հայտնվելը ականատեսի խորին համոզմամբ, համատարած անգրագիտության, բարձրաստիճան հոգեւոր այրերի անհետեւողականության ու սեփական վարք ու բարքով օրինակ չհանդիսանալու անմիջական հետեւանքն էր: ԺԶ դարի վերջին եւ ԺԷ դարի սկզբին գահակալած կաթողիկոսների մասին Դավրիժեցին գրում է. «... Եւ կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով եւ կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեան, սոյնպէս եւ ինքեանք ձեռնադրեալ եպիսկոպոսունքն եւ քահանայքն, տգէտք, խոտանք եւ անպիտանք, ...յառաւօտէ մինչեւ ցերեկոյ հետեւեալ կատակաց եւ լկտի բանից՝ եւ դատարկութեան»[10]:

Բանասեր Առաքել Առաքելյանն իրավացիորեն նկատում է. «Դավրիժեցին այս տողերը գրել է, իհարկե, ոչ թե ելնելով աթեիզմի դիրքերից, այլ որպես ջերմեռանդ քրիստոնյա եւ հայ եկեղեցուն եւ նրա դարավոր ավանդներին ու դավանանքին հավատարիմ եկեղեցական պաշտոնյա»[11]:

Այսպիսի իրավիճակներում է, որ ԺԷ դարի սկզբին Սուրբ Էջմիածինը՝ Հայոց Եկեղեցու հոգեւոր կենտրոնը, մատնվում է անտանելի դրության: Կաթողիկոսարանը ամեն տեսակ շահատակությունների ասպարեզ է դառնում: Կաթողիկոսներից անդադար հարկեր էին պահանջում, իսկ նրանք, ոչ միշտ կարողանալով բավարարել տիրողների այդ անհագ պահանջը, դիմում էին ժողովրդին: Գոյություն պահելու համար անգամ տոկոսներով գումար վերցնելով հսկայական պարտքերի տակ էին ընկնում: Դրությունն այնքան սարսափելի էր, որ ոչ մի կաթողիկոս հանձն չէր առնում միայնակ ղեկավարել եկեղեցին, եւ կրկին որդեգրվում է եկեղեցական պատմության մեջ տեղ գտած աթոռակալ կաթողիկոս հասկացությունը: Կաթողիկոսին ձեռնադրում էր իրեն աթոռակից, իսկ ինքը, հենց որ պարտատերերի եւ իշխողների պահանջները խստության ծայրահեղ աստիճանի էին հասնում, հեռանում էր:

7 «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 296:

8 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 241: Այսուհետեւ **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., եւ էջը:

9 **Մ. Ջուլալյան,** Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եւրոպացի հեղինակների, գիրք Ա, Երեւան, 1990, էջ 143:

10 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 242:

11 **Ա. Առաքելյան**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. Բ, Երեւան, 1964, էջ 556:

Կաթողիկոսական գահին միաժամանակ նստում էին երկու հոգի՝ հաճախ միմյանց մրցակից: Մինչեւ ԺԷ դարի առաջին քառորդը առանց աչքի ընկնող արժեքավոր գործերի Էջմիածնում նստում են մի շարք կաթողիկոսներ, բացառություն է միայն Սրապիոն Կաթողիկոսը, որին սակայն չի վիճակվում երկար գահակալել:

ԺԷ դարի սկզբին, Էջմիածնի կաթողիկոսական գահին բազմել էին երկու անձինք. Դավիթը (1590-1629 թթ.) եւ նրա աթոռակից Մելքիսեթը (1593-1626 թթ.): Նրանց օրերին ավելի են բազմանում աթոռի պարտքերը, որի պատճառը, ինչպես Դավրիժեցին է գրում. « ...զի մինչեւ ցարդ մի էր Կաթուղիկոսն, եւ մի էր մսխող, այլ այժմ եղեն երկու Կաթուղիկոսք եւ երկու մսխողք»[12]: Աթոռի եւ ժողովրդի համար սոսկալի այս ժամանակներում Էջմիածնի երկու կաթողիկոսներն էլ փախստական թափառում էին՝ խուսափելով պարտատերերից « ...եւ ոչ կարէին ...լուսով տուընջեան ի շինէս յայս՝ ի միւս շէնն երթալ, այլ ի գիշերի երթային»[13]: Նրանք այս վիճակից դուրս գալու համար կաթողիկոսության են հրավիրում ժամանակի նշանավոր, մեծ դիրքի եւ կարողության տեր վարդապետներից մեկին՝ Սրապիոնին, պայմանով, որ մարի պարտքերը: Դեռ Էջմիածին չհասած, Մելքիսեթն ու Դավիթը հրաժարվում են նրան կաթողիկոս դարձնելու իրենց իսկ հղացած գաղափարից: Այնուամենայնիվ Սրապիոնին. «... հաճեալ եւ հաւանեալ Ջուղայեցւոցն... ձեռնադրեցին կաթուղիկոս ամենայն Հայոց...»[14]: Այսպիսով, Էջմիածնի կաթողիկոսական աթոռին միաժամանակ հայտնվում են երեք կաթողիկոս: Ցավալի, սակայն իրականություն է, որ կար մեկ աթոռ եւ երեք կաթողիկոս, նույնիսկ. «...ոչ թէ մի էր, այլ երեք եւ չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան եւ ագահութեան իբրեւ զմաքսաւորս ղաբալայիւ եւ հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ եւ զսուրբ Աթոռն Էջմիածին»[15]: Այս փխուր իրականությանն է անդրադառնում նաեւ Դավիթ Բաղիշեցին՝ հիշելով նրանց անունները. « ...զի Դ(4) կաթողիկոսք կային՝ Աւետիս, Մելքիսէթ, Դաւիթ, եւ միւսն անյիշելի[16], զմիմեանս փոփոխեալ կաշառս տալով Պարսից թագաւորին եւ մի ի սոցանէ յաթոռն ոչ նստէին այլ յԱսպահան»[17]: Կաթողիկոսական գահին միաժամանակ մի քանի կաթողիկոսների նստելու մասին ոչ միայն հաղորդում են Դավրիժեցին ու Բաղիշեցին, այլեւ բազում հիշատակարանագիրներ. « ...յիշեցէք ի մաքրափայլ աղաւթս ձեր Աւետիս կաթողիկոս Էջմիածնեցի...», « ...ի թվիս Հայոց ՌՆԾ (1601), ի հայրապետութեան սբ. Էջմիածնայ տէր Դաւիթ Կաթողիկոսին եւ տէր Մելքիսէթ կաթողիկոսին...», « ...ի թուականութեան հայկազեան տոմարի ՌԾԴ (1605), ի հայրապետութեան տեառն տէր Սրապիոն քաջ ռաբունապետին Ուռհայեցոյ», «Ի թվականիս Հայոց Ռ եւ ԾԵ (1606) ես Ճանաղենց տէր Առաքել եպիսկոպոսս վաքիլ եւ աթոռակալ սբ. յաթոռոյն յԷջմիածնայ»[18]: Մի քանի կաթողիկոսներ լինելու պարագան շատ անգամ նաեւ երկընտրանքի ու անորոշության առջեւ է կանգնեցրել հիշատակագիրներին, ովքեր չիմանալով թե ով է իսկական կաթողիկոսը,

12 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 58:
13 Անդ, էջ 59:
14 Անդ, էջ 62:
15 Անդ, էջ 242:
16 Կարծում ենք, որ սա Մելքիսեթի կողմից ձեռնադրված Սահակ Կաթողիկոսն է. (Մ. ա. Բ.)
17 **Վ. Հակոբյան**, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIIIդդ, հ. II, Երեւան, 1956, էջ 357:
18 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 4, 241, 15, 188, 197:

չեն հիշատակել նրան. « ...ի ժամանակս յայս կաթողիկոս ի սբ. Էջմիածին ոչ գիտեմք թէ ով ոք է», « ...ի յանհայրապետութեան ժամանակի ազգիս Հայոց...»[19]:

Էջմիածնում ստեղծված խառնակ կացության մասին, որն ավելի էր խորանում եւ ներքին երկպառակությունների ու չարաշահումների աղբյուր դառնում, ժամանակակիցներն ահազանգել են դեռեւս ԺԶ դարի վերջից: Այսպես, Առինջի վանքի Հակոբ եպիսկոպոսը 1595թ. գրված իր մի հիշատակարանում ասում է. «Բայց գրեցաւ սայ ի վանքս Առընջեաց, ի դուռն Սուրբ Մարիամ Աստուածածնին, եւ այլ ամենայն սրբոց որ ասդ կան հաւաքեալ, ի թուականիս հայոց ՌԽԴ(=1595 թ.), ի հայրապետութեան Տեառն, **զորո՛ ասացից. բազումք կոչեցեալք կան ի աթոռս սուրբ Էջմիածնայ Վաղարշապատու**»[20] (ընդգծ. մերն է, Մ. ա. Բ.):

Այդ ամենին ի տես, ժողովուրդը չի կարողացել լռությամբ անցնել եւ հանդուրժել: Հետաքրքրական է վանեցիների կողմից Մելքիսեթ աթոռակից կաթողիկոսին ուղղված նամակը, որում նրան բնորոշելով ամենախիստ արտահայտություններով, մեղադրում են ամենածանր զեղծումների մեջ: Հատկանշական է, սակայն, որ նույնիսկ բացառիկ այս կացության մեջ մեղադրողներն առաջնորդվում են «քահանայագործությունը բարձր է քահանայից» կանոնական գիտակցությամբ: Նամակի սկզբում վերանալով Մելքիսեթի անձից՝ նախ ողջունում եւ իրենց որդիական խոնարհությունն են հայտնում Մելքիսեթ Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Ժամանեսցէ յոյժ կարօտիւ ողջոյն վեհիդ մեծի, զշնորհաբաշխ սուրբ աջդ համբուրեմք, որ եւ ինքն Քրիստոս պահեսցէ զքեզ յերկար ամօք, ի փառս իւր եւ ի պարծանս Հայոց Ազգիս»[21], իսկ հետո հիշատակելով մի շարք ցավալի երեւույթներ՝ ժողովրդի եւ Եկեղեցու վիճակը, ազգային-եկեղեցական կյանքում առաջ եկած խախտումները, հայոց դավանանքից շեղվելու վտանգը, նրբին անցումով հանգում են ստեղծված կացության պատճառին՝ շարադրանքի աստիճանաբար խստացումով ամեն ինչի համար մեղադրելով Մելքիսեթին:

Դավրիժեցու նման Գրիգոր Դարանաղցին եւս Էջմիածնում ստեղծված վիճակի գլխավոր մեղավոր է համարում Մելքիսեթին՝ նրան անվանելով «չար եւ անօրէն, խոտան եւ անպիտան» կաթողիկոս[22]: Տիրող ծանր կացությունը թե ինչ ճնշող տպավորություն է թողել հոգեւորական երկու մատենագիրների վրա՝ նրանց երկուսին էլ միմյանցից անկախ թելադրելով միեւնույն տողերը, երեւում է Դարանաղցու եւ Դավրիժեցու գործերի հետեւյալ համադրական քննությունից:

Գրիգոր Դարանաղցի

«...Սուրբ Էջմիածնայ անօթոց, արծաթեղէն սպասուցն՝ թէ՛ խաչ, թէ՛ լապտերք, թէ՛ քշոցք, թէ՛ բուրվառք, թէ՛ խնկատուփք եւ աւետարանք ոսկետուփք եւ թէ՛ հանդերձեղէնք սպասուց անթիւք, ամենեքեան ոսկեթելօք պատկերօք եւ գրովք սրբովք, ահաւասիկ

19 «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Բ, Երեւան, 1978, էջ 47, 282:

20 **Բարգէն Ա. աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, 1939, էջ 16:

21 Տե՛ս **Լեո**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 278:

22 **Գրիգոր Դարանաղցի**, նշվ. աշխ., էջ 52:

բազում ժամանակաց հետէ են գրաւ եդեալ վասն անարժան պարտուցն, որ ոչ էր հարկապահանջողութենէ թագաւորաց կամ յիշխանաց, այլ ի հակառակութենէ միմեանս անկանելով, յափշտակել ջանալով զկաթողիկոսութիւնն, կաշառս խոստանային անօրինաց ձեռագիր կնքեալ նամակով»[23]:

Առաքել Դավրիժեցի

«Իսկ զարդք եւ սպասք, եւ անօթք եկեղեցւոյն, եւ կամ տան բնաւ ոչ գոյր զոր ինչ եւ լեալ էր ի հին ժամանակաց, կաթուղիկոսքն՝ զամենայն վաճառելով եւ գրաւ դնելով վատնեալ էին. եւ արդ՝ եւս գրաւ եդեալ անօթքն գոյին առ մահմետական իշխանս. զորս ազատեաց Մովսէս վարդապետն. որ էր Աջն Արիստակէսի Հայրապետին՝ որդւոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, այլեւ զաջ Աղջոց վանաց սրբոյն Ստէփաննոսի, ընդ որոց եւ խաչ եւ սկիհ եւ բուրվառ՝ եւ շուրջառ եւ այլ եւս ինչք»[24]:

Ինչպես տեսնում ենք, Դարանաղցին գրում է ավելի մանրամասն, ցավով ու դառնությամբ, իսկ Դավրիժեցուն բնորոշ է պատմական ընդհանրացվածությունը: Երկու հեղինակների ոճական նրբերանգային տարբերությունների պատճառը հետեւյալն է. Դարանաղցին գրում է որպես ականատես ժամանակակից, եւ նրա գործը յուրօրինակ մի ուղեգրություն, ժամանակագրություն է: Դավրիժեցին էլ, թեեւ ժամանակակից է, սակայն, ավելի ուշ է գրել, ուստի ականատեսի անմիջական տպավորություններն իրենց տեղը զիջել են պատմիչի վերլուծություններին: Բացի այդ, 50-60թթ. արդեն Մայր Աթոռն այնպիսի վերելք է ապրում, որ ԺԷ դարի առաջին քառորդի դեպքերը նրան ներկայանում են լոկ որպես անցյալ, ճիշտ է տխուր ու մռայլ, բայց ամեն դեպքում անցյալ:

Ավելացնենք, որ Սուրբ Էջմիածինն ու Մայր Աթոռն այնպիսի բարձր ու նվիրական հասկացություններ էին, որ ժամանակակիցները ոչ միայն ցավ ու ափսոսանք են զգում, այլեւ անկյալ վիճակի նկարագրությունն իսկ աշխատում են կատարել որոշակի պատշաճությամբ[25]:

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակի հեղինակներն այպանելով Մելքիսեթին եւ մյուս շահամոլ աթոռակիցներին, նաեւ գիտակցում են, որ այս բոլոր անկարգությունները մեծապես պայմանավորված են եւ ժամանակի անհաստատ ռազմա-քաղաքական կացությամբ: Այս

23 Անդ, էջ 54:

24 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 252:

25 Նույն իրողությանն ենք հանդիպում ձեռագրերի հիշատակարաններում: Քանի որ հիշատակարաններն ունեն կանոնական կառուցվածք, ուստի նախ՝ հիշվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իսկ եթե գրիչը Աղթամարի, Աղվանից կամ Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա թեմերից էր, ապա փվյալ կաթողիկոսության գահակալը: Հավատարիմ այս սկզբունքներին՝ գրիչները, Մելքիսեթի դատապարտանը թողնելով երկնային տնօրինությանը, բոլոր դեպքերում նրան ընդունում են որպես հոգեւոր առաջնորդ, ուստի կանոնական դարձած կաղապարում հարկ են համարում, համաձայն ընդունված կարգի, հիշել նաեւ Մելքիսեթին: Այսպես, Էրզրումի Դվնիկ գյուղի Ծերուն գրիչի համար, անկախ Մելքիսեթի բոլոր մեղքերից, նա Լուսավորչի աթոռի գահակալն է, եւ գրիչը 1603 թ. ընդօրինակված Ավետարանում այսպես է գրում. «Ի հայրապետության տեառն Էջմիածնայ տէր Մելքիսեդ կաթողիկոսին, որ նստի յաթոռ սբ. Լուսաւորչին, ի յառաջնորդութեան տեղոյս Պատդս եպիսկոպոսին»: «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 119: Աղթամարի կաթողիկոսությանը ենթակա վիճակից Կիրակոս Ավնդացին 1601 թվականին Խիզանում ընդօրինակած Ավետարանում գրում է. «Ի հայրապետութեան հայկազեան սեռի Էջմիածնին Տեառն Մելքիսեթին, եւ ի մերոյս կաթողիկոսութեանն Աղթամարայ Տեառն Գրիգորիսի...», անդ, էջ 34:

գործոններով բացատրելով Էջմիածնում ստեղծված կացությունը՝ Հակոբ գրիչը 1608 թ. Լվովում ընդօրինակած Աստվածաշնչի հիշատակարանում գրում է. «Եւ հայրապետ հայոց ոչ գոյր ի սբ. Էջմիածինն... վասն պատերազմացն որ կայր ի մէջ Պարսից եւ իսմայելացոց»[26], ապա շարունակում գրել բռնագաղթի պատճառով հայ ժողովրդի ցիրուցան լինելու մասին: Թե հայրենիքի ծանր վիճակը հոգեկան ապրումների ու նրանց գրական արտահայտության ինչ ընդհանրացումներով կարող է դրսեւորվել տարածությամբ ու ժամանակագրությամբ իրարից որոշակի հեռավորության վրա ստեղծագործած եւ միմյանց անծանոթ երկու հեղինակների գործերում, լավագույնս երեւում է հիշատակարանի եւ Դավրիժեցու «Պատմության» հետեւյալ երկու հատվածների համեմատությունից.

Հակոբ Երեցի 1608 թ. հիշատակարան.

«... գերի եւ եղկելի եղեն ամենայն ազգն Հայոց, զի ցրուեցան ամենեքեան ընդ երեսս երկրի, որպէս փոշի հոսեալ ի հողմոյ՝ ծագաց մինչ ի ծագս, բաժանեալք ի սիրելեաց, հեռացեալք ի հայրենեաց, որոշեալք ի յընկերանեաց, անջատեալք յամենայն բարութեանց. շրջէին, պանդխտէին նշդեհացեալք ի մէջ այլասեռ ազգաց, այլախօս լեզուաց եւ անընդել աշխարհաց, որպէս զոչխար, որոց ոչ իցէ հովիւ, անտերունչ մնացեալ, ողորմելի եւ աւաղելի եղեր մեծանուն ազգ Հայոց Մեծաց»[27]:

Առաքել Դավրիժեցի

«... ամենայն ազգն հայոց ելեալ վտարանդի, եղեն յիւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութեանց եւ յաշխարհաց, եւ տարադէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր եւ ցանս եղեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ, ի Կիպրոս, ի Կոստանդնուպօլիս...»[28]:

Հիշատակարաններում դիտարկվում է մի հետաքրքիր երեւույթ եւս: Գրիչները քանի որ հիշատակարանների թելադրած գրական կաղապարով պետք է անպայման գրեին «ի հայրապետութեան» նրանք այդքանը գրում էին, սակայն առանց նշելու Հայրապետի անունը՝ Մելքիսեթին հիշատակության համար անարժան համարելով: Այսպես, 1607 թ. Կամենիցում գրված ձեռագրի հիշատակարանում Հակոբ սարկավագն ասում է. «Ի հայրապետութեան սբ. Էջմիածնա[յ] **տեառն տէր** (ընդգծ. մերն է, Մ. ա. Բ.), եւ ի յառաջնորդութեան այսմ նահանգի տէր Կարապետ քաջ ռաբունապետի»[29]: 1621 թ. Ամիդում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչ Հովհաննես Չմշկածագեցին օրվա Կաթողիկոսի անունը դուրս է թողնում՝ շարադրանքը այսպես կառուցելով. «ի հայրապետության ազգիս Հայոց եւ ի վերադիտողության Համթայ վիճակի արքեպիսկոպոսի տէր Բարսեղ վարդապետին»:

Այսպես, մինչ պատմությունն ու իրենց ապրած ժամանակը իմաստավորելու եւ

26 «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ. Ա, էջ 325:
27 «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ.Ա, էջ 325:
28 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 147:
29 «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», հ.Ա, էջ 277:

արժեւորելու կոչված պատմիչները, ամենախիստ բնորոշումներն են տալիս եւ ամենամռայլ գույներով ներկայացնում Մելքիսեթին, ապա գրիչներն իրենց իրավունք չեն վերապահում Հայրապետի մասին, թեկուզ եւ անարժան, այդպես գրել: Ուստի նրանք կամ Մայր Աթոռի անմխիթար վիճակն են ներկայացնում կամ չեն հիշատակում Հայրապետի անունը:

Նման պարագաներում է, որ իրենց իշխանությունը պահելու համար Դավիթն ու Մելքիսեթը որոշում են դիմել Շահ Աբասի օգնությանը, եւ Մելքիսեթը Դավթի հաճությամբ գնում է նրա մոտ: Անարգանքի սյունին գամելով երկու կաթողիկոսներին, որոնք որոշել էին Շահ Աբասի օգնության դիմել, Դավրիժեցին գրում է. «Խորհեցան խորհուրդ՝ եւ ոչ տերամբ ըստ գրեցելումն, ի կորուստ անձանց իւրեանց, ի կործանումն եւ ի տապալումն աշխարհին, եւ ի ջնջումն ազգին իւրեանց»[30]: Ինչպես երեւում է, Դավրիժեցին նրանց անխոհեմ արարքին է վերագրում երկրին վրա հասած դժբախտությունները, եւ ինչպես Առաքել Առաքելյանն է նկատում. «Բացի այդ, ազգադավ հանցագործության հեղինակ հանդիսանալով՝ նրանք ավելի են բորբոքում ժողովրդական ցասումը»[31]:

Մինչ Շահ Աբասի ավերներից շուրջը քար քարի վրա չէր մնում, եւ հայ ժողովուրդը, կարծես թե օրհասական վիճակի էր հասել, Դավիթն ու Մելքիսեթը վիճում էին, թե ով էր այդ ավերակների վրա միահեծան իշխանություն վարելու: Միջոցների առջեւ խտրություն չէր դրվում: Մելքիսեթն իր անօրեն ձգտումներով գերազանցում է Դավիթին, որը բռնի գաղթի ժամանակ չի լքում իր հոտին եւ նրանց հետ շարունակում է ճանապարհը, մինչ Մելքիսեթը կես ճանապարհից վերադառնում է Էջմիածին եւ «ոչինչ բնաւ փոյթ ունէր վասն շինութեան, եւ պայծառութեան եւ ժամակարգութեան, եւ հաստատութեան Էջմիածնի,- դառնությամբ գրում է Դավրիժեցին,- այլ իւր տեղի բնակութեան կալեալ յԵրեւան քաղաքի... եւ ի վերայ իւր ժողովեալ զազգականս եւ զմերձաւորս իւր եւ նոքօք յօրանայր լոյծ եւ ընդարձակ կենօք, մտիւքն եւ արդեամբքն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի»[32]: Մելքիսեթի այս արարքը շարժում է Էջմիածնում գտնվող մի քանի եպիսկոպոսների ու վարդապետների վրդովմունքը, որոնց մեջ դեռեւս կենդանի էր մնացել կաթողիկոսական աթոռի հանդեպ ունեցած նախանձախնդրությունը, որոնց, սակայն, Մելքիսեթին հաջողվում է պարսից Ամիրգունա խանի միջոցով արտաքսել մայրավանքից: Լեոյի բնութագրմամբ Մելքիսեթը «մի վեղարավոր խան էր», որը ոչնչի առաջ կանգ չէր առնում փող հայթայթելու համար՝ լինի դա մտերմություն կաթոլիկների հետ, սրբերի մասունքներ վաճառել թե սիմոնականություն: Գրիգոր Դարանաղցին արծաթասիրության մոլուցքով արբեցած Մելքիսեթին իրավացիորեն որակում է «սուտանուն պատրիարք, կարի անշնորհ էր եւ առանց աշխատանաց վարդապետութիւն ցանկայր... էր փառամոլ եւ պճնասէր եւ յափշտակող եւ գազանաբարոյ»[33]:

Իմանալով միայն թալանել եւ թշնամի լինելով ամեն բարեկարգության, նա եկամուտի հարուստ աղբյուր էր դարձրել տգետ ու անբարոյական մարդկանց կաշառքով ձեռնադրելը: «Այլ եւ այսու պատճառաւ,- գրում է Դավրիժեցին,- մտին բազում անկարգութիւնք եւ օրինազանցութիւնք յազգս Հայոց՝ կաշառօք անարժանից ձեռնադրութիւն տալ՝ եթէ

30 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 62:
31 **Ա. Առաքելյան**, նշվ. աշխ., էջ 99:
32 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 184:
33 **Գրիգոր Դարանաղցի**, նշվ. աշխ., էջ 19:

եպիսկոպոսաց, եթէ քահանայից... Ձայսոսիկ եւ որ սոցին նման բազում անկարգութիւնս գործէին կաթուղիկոսն եւ եպիսկոպոսունքն իւր»[34]: Եկեղեցիները կապարելապես դապարկ եւ ամայի էին, որովհետեւ առաջնորդները կողոպտել էին դրանք՝ մահմեդականներին կաշառք տալու համար: Էջմիածինը՝ հայոց հոգեւոր կենտրոնը, քարուքանդ ու անտեր մի վանք էր. չկար որեւէ գիրք, որովհետեւ այլեւս կարդացող չկար, չկար որեւէ սպասք կամ եկեղեցական իր, որովհետեւ ամենը վաճառված էր կամ գրավ դրված: Աթոռն ամայանում էր երկար ժամանակով՝ կորցնելով ոչ միայն շարժական, այլեւ անշարժ կայքերը: Վաղարշապատի եկեղեցիների մասին Դավրիժեցին գրում է. «Եւ երեքին տաճարքս այսոքիկ, եթէ Էջմիածին, եթէ Գայիանեայ, եւ եթէ Հռիփսիմեայ էին աւերեալ, խախտեալ եւ խարխալեալ եւ անշքացեալ, իբրեւ զտաղաւար յայգւոջ մրգապահաց... Եւ յԷջմիածին կային միաբանք սակաւք, եւ այնք եւս յոյժ տգէտք եւ գռեհիկք: Իսկ Գայիանեայ եւ Հռիփսիմեայ ամենեւին անբնակ եւ անպարիսպ»[35]: Ինչպես ասացինք, Սուրբ աջերը, ավետարանները, սկիհները, կանթեղները, բոլորը գտնվում էին մահմեդականների տներում: Կաշառքների, թալանի եւ գրավի հետեւանքով «սուրբ աթոռն խարխալեալ եւ խրթնացեալ ի բարեզարդութեան եւ գոմս խաշանց եղեալ»[36]: Վանքում մնացել էին միայն մի քանի վանականներ, որոնք իրենց ժամանակի մեծ մասը գյուղերում գյուղատնտեսությամբ զբաղվելով էին անցկացնում:

Այս մի քանի վարդապետները նույնիսկ կանթեղ չէին վառում մայրավանքում: Այդ գործը սպանձնել էր մի մահմեդական՝ այցելուներից շահ սպանալու ակնկալիքով: Միայն Դավրիժեցին չէ ողբում վանքի վիճակը: Նրան են միանում ժամանակի բոլոր հիշատակարանագիրները: Բավական է այստեղ հիշել Դավիթ Բաղիշեցու աղիողորմ ճիչը. « **...զի եթէ մայրն բազմորդի եւ աթոռն քրիստոսադիր այսպէս կայր** (ընդգծ. մերն է, Մ. ա. Բ.), որպէս ասացաք, որչափ եւս առաւել ծնեալքն ի նմանէ նսեմացեալ կային նստեալ ի սգի, ըստ այնմ, եթէ լոյսդ խաւար է, խաւարն որչափ եւս»[37]: Արդ, եթե այսպես էր հոգեւոր իշխանության կենտրոնը, ինչ պիտի լիներ մյուս տեղերում: Վանքերում մնացած հոգեւորականները վաղուց մոռացել էին, որ իրենք եկեղեցական են, նրանք միայն ապրուստի միջոց էին հայթայթում գյուղատնտեսությամբ. «...իւրաքանչիւր սեւագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի եւ բուրաստան, փէթակ եւ տուն..., եւ զմուտս սպացուածոց. նաեւ զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին: Եւ զայն ամենայն ինքեանց, եւ ազգայնոց եւ իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց»[38]: Ջերմեռանդ հավատացյալ վանական Դավրիժեցին այս ամենը նկարագրելուց հետո սրտի անսահման կսկիծով գրում է, որ եթե եկեղեցականներն են այսպես, «զինչ եւս ասացից զաշխարհականաց»[39]: Այդ բոլորի հետեւանքով «Եկեղեցիք եւ վանօրայք, ամենեքեան անշուք եւ անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զարդուց եւ ի սպասուց... Բազմաժամանակեայ փակեալ դրամբք, խաւար եւ անլոյս, լռեալ ի պաշտամանց եւ ի պատարագաց...»[40]:

---

34 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 198:
35 Անդ, էջ 168:
36 **Վ. Հակոբյան**, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 357:
37 Անդ:
38 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 241:
39 Անդ, էջ 242:
40 Անդ:

Այս սոսկալի ժամանակներում շատ քիչ, կարելի է ասել հատ ու կենտ վանքեր էին մնացել, ուր դեռ վառ էր գիտություն ձեռք բերելու վանականների փափագը, որտեղ կային սովորելու եւ սովորեցնելու հայ մարդու եւ հայ հոգեւորականի դարավոր կոչման սակավաթիվ հետեւորդներ: Վանքը, որ ամենից առաջ դպրոց էր եղել հայության համար եւ ծայրահեղ թշվառության պահերին անգամ իր ծոցում վառ էր պահել գրագիտության գեթ համեստ առկայծող կրակը, այժմ միանգամայն այլ կերպարանք էր ստացել. «Տգիտութեամբ խոպանացեալ եւ կորդացեալ էր ազգս հայոց, եւ ոչ միայն ոչ ընթեռնուին, այլեւ ոչ զգիրս գիտէին, եւ ոչ զզօրութիւնս գրոց. վասն զի անպիտանացեալ էր գիրքն յաչս մարդկան, եւ իբրեւ զկոճեղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով եւ մոխրով»[41]. իր պատմության մեջ այսպես պիտի բնութագրեր Առաքել Դավրժեցին դարի անկյալ վիճակը, որին ինքը ականատես էր եղել եւ որի վերացմանը այնքան ջերմեռանդորեն ու նախանձախնդրորեն մասնակցել էր: Գրքերը մոռացության էին մատնվել եւ դարավոր փոշի էր նստել նրանց վրա: Մեռնում էր հայ գրականությունը, որի անկման պատճառներից մեկը Լեոն այսպես է բացատրում. «... դա արհեստական գրականություն էր, հեռու իրական կյանքից, անմատչելի ժողովրդի բազմության: Ինքնուրույն ստեղծագործություն, որի մեջ խոսեր հայ ժողովրդի արյունն ու սիրտը, համարյա բոլորովին չկար այդ գրականության մեջ, որ համարյա ամբողջովին գոյություն ուներ միայն մի դասակարգի՝ հոգեւորականության եւ մի հիմնարկության՝ եկեղեցու համար»[42]: Ամենեւին չթերագնահատելով մեծ պատմաբանին՝ շեշտենք, որ գրականության անկման պատճառը միայն այս չէր: Ո՞րն էր հոգեւորականների մեղավորությունը, երբ հեղինակում կամ ընդօրինակում էին բացառապես եկեղեցական եւ եկեղեցագիտական գրքեր՝ իրականացնելով իրենց կրթական առաքելությունը: Ոչ մի, քանի որ այդ ժամանակ միայն այդպես էր իրականացվում ժողովրդի կրթությունը եւ կրթական գործը միայն ու միայն վանքերին էր վերապահված: Լեոն էլ անկեղծ խոստովանությամբ ասում է, որ քիչ աշխարհականներ են իրենց մասնակցությունը բերել հայ գրականության ստեղծման գործում[43], ուստի պետք է ասենք, որ նրանց բերած նպաստն այնքան քիչ էր, որ անհետացավ հսկայածավալ հոգեւոր ստեղծագործությունների մեջ: Այլ խոսք, եթե Լեոն մեղադրեր հոգեւորականներին իրենց վստահված կրթական գործը ճիշտ չիրականացնելու, նույնիսկ իսպառ դրանից հրաժարվելու մեջ: Այս իրողությունը չենք կարող ժխտել: Սակայն, բնական է եզրակացնել, որ պատերազմների ու ասպատակությունների, հրի ու սրի, սովի եւ գաղթի պայմաններում գրի ու գրչության զարգացման հնարավորություն չկար, որ գիրը եւ գիրքը ժողովրդի աչքում այն նշանակությունը ունենալ չէին կարող, ինչպես խաղաղ ժամանակներում:

ԺԷ դարի հայ մտավոր ու մշակութային կյանքի պատկերն ամբողջացնելու համար պետք է ուշադրություն դարձնել կաթոլիկ քարոզիչների ծավալած եռանդուն միարարական շարժմանը, որը հայ հոգեւորականության անկյալ վիճակի գլխավոր արդյունքներից մեկն էր: 1622 թ. Գրիգոր ԺԵ Պապի հրամանով ստեղծվում է «Հավատի պրոպագանդա»-ն, որի նպատակն էր տարածել կաթոլիկությունը հեթանոսների մեջ եւ վերացնել հերձվածողությունը

41 Անդ, էջ 219:
42 **Լեո**, նշվ. աշխ., հ. Ե, էջ 145::
43 Անդ:

քրիստոնյաների մեջ: Հայերը՝ որպես «հերձվածող» ազգ, արժանանում են Պրոպագանդայի ուշադրությանը: Նրանք այստեղ սկսում են գործել ավելի եռանդուն եւ միջոցների առաջ խտրություն չդնելով՝ ունենում որոշ ձեռքբերումներ: Հաջողություններ են արձանագրվում ի մասնավորի Հայաստանում եւ հայաշատ վայրերում, որի հիմնական պատճառը հայերի տնտեսական եւ մշակութային անհամեմատ ծանր վիճակն էր:

Որքան էլ զարմանալի է, սակայն, կաթոլիկները հաջողությունների են հասնում նաեւ հոգեւորականների, ի մասնավորի երիտասարդ միաբանների շրջանակում: Այս առթիվ ուշագրավ է Պողոս Պիրոմալիի Էջմիածնում հայտնվելու պարագան եւ Էջմիածնի միաբանության մեջ նրա առաջացրած հեղափոխությունը: Չենք կարող ասել՝ անձնական համակրանքն էր, թե այլ պատճառ, սակայն, Փիլիպպոս Կաթողիկոսի (1632-1655թթ.) ժամանակ Էջմիածնում որպես ուսուցիչ տեսնում ենք կաթոլիկ կրոնավոր Պողոս Պիրոմալիին: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար նշենք, սակայն, որ նրա Էջմիածնում հայտնվելը վրդովմունք է առաջացնում ավելի տարեց միաբանների մեջ[44], որոնք Պիրոմալիին Էջմիածնից հեռացնելու խորհուրդ են տալիս կաթողիկոսին: Վերջինս հովվական այցելության մեկնելու պատճառով աչքաթող է անում նրանց զգուշացումը, եւ Պիրոմալին հնարավորություն է ունենում վեց ամիս Էջմիածնում դասավանդելու, որը եւ բավական է լինում համախոհներ շահելու համար[45]:

Հայ վարդապետները՝ տարված լինելով իմաստասիրություն եւ քերականություն սովորելով, աստիճանաբար սկսում են անտեսել Հայոց դավանանքը, որից Պիրոմալին լավագույնս օգտվում է: Մի քանի երիտասարդ միաբաններ, որ մերժել էին աշակերտել Մելքիսեթ Վժանեցուն, առանց Լեհական պարտության նախադեպը հաշվի առնելու, ընկնում են նրա ազդեցության տակ: Կաթողիկոսի կտրուկ վերաբերմունքի դեմ ուղղված նրանց բողոքը տեղին է, սակայն ոչ արդարացի. «Մենք ուսեալ վարդապետներ կ՚ուզենք, որ մեզի սորվեցնեն. Ձեր վարդապետներէն ոչ մէկը ատակ է մեզ զարգացնելու»[46]: Նրանցից ոմանք, բառացիորեն **հրապուրվելով** Պիրոմալիով, դավաճանում են իրենց Եկեղեցու սկզբունքներին ու դավանանքին:

Այս տխուր փաստի վկայությունն է Սիմեոն Ջուղայեցու անկեղծ խոստովանությունը Ոսկան Երեւանցուն ուղղված նամակում. «Արդ գիտեմ ստուգապէս զի զղջացեալ ես եւ ապաշաւես. քանզի ես ինքնին դմին հանդի(պեցայ): Քանզի յորժամ ոչ գիտէի զզօրութիւն գրոց եւ ոչ է(ի) տես(եալ) զդոսա, եռայր սիրտ իմ առ խաբեբայսդ, եւ դու գիտակ իսկ ես: Իսկ յորժամ ճշմարտութիւն հաւատոյ ու(սայ) եւ զդոքա տեսի, գիտես թէ որպէս վարէի ընդ եր(կա) բնակսդ: Եւ այն յայնմ ժամանակին, որ ոչ գիտէի ճշմա(րտապէս) զբնախօսութիւն, նաեւ զզօրութին բանից աստուածաբ(անութեան), այլ սակաւուք հասեալ էի ճշմարտութեան»[47]:

Բերված այս երկու վկայությունները գալիս են մեկ անգամ եւս փաստելու, որ հայերից ոմանց, ի մասնավորի երիտասարդների կաթոլիկամետ ձգտումները հեռեւանք էին միայն ու միայն գիտելիքների պակասի: Հայ մտավորականները հրապուրվում էին կաթոլիկ

44 Տե՛ս **Կ. եպս Ամատունի**, Ոսկան վարդապետ Երեւանցի եւ իր ժամանակը: Լուսաւոր էջ մը ԺԷ դարու Հայ Եկեղեցական պատմութենէն, Վենետիկ- Ս. Ղազար, 1975, էջ 52:

45 Անդ, էջ 53:

46 Անդ, էջ 53:

47 Անդ, էջ 279:

կրոնավորների ունեցած անհամեմատ հարուստ եւ համակարգված գիտելիքներով՝ առանց հասկանալու նրանց տակ սքողված ու հեռուն գնացող նպատակները: Իհարկե, կային եւ այնպիսիք, ովքեր զգալով վտանգը կես ճանապարհից հրաժարվում էին, ինչպիսիք են Խաչատուր Կեսարացին եւ Սիմեոն Ջուղայեցին, սակայն, կային եւ այնպիսիները, որ այլ եւ այլ շահեր հետապնդելով շարունակում էին իրենց վնասակար ընթացքը (Վարդան Հովնանյան, Բարսեղ Բարսեղյան, Նիկոլ Թորոսովիչ եւ ուրիշներ): Թորոսովիչի շահամոլության եւ փառասիրության հետեւանքով Հայ Եկեղեցին կորցնում է պատմական իր թեմերից եւ հայ ամենամեծ գաղթօջախներից մեկը՝ Լեհաստանի հայոց թեմը:

Վերահաս ու առկա այսպիսի դժվարությունները, սակայն, ի զորու չէին կասեցնելու Ս. Էջմիածնի պատմական երթն ու առաքելությունը, որը նորովի էր արտահայտվելու ԺԷ դարի 30-ական թվականներից: